Գրախոսություն

«Հեղինակային կրթական ծրագիրը հետազոտական վարժարանում. ներկան և ապագայի հեռանկարները»

Սովորող *՝ Դավիթ Մուրադյան, 12-2 դասարան*
Ղեկավար *՝ Լուսինե Փաշայան, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն*

Աշխատանքը ծավալուն է և համապարփակ։ Հետազոտական աշխատանքի կառուցվածքային առանձնահատկությունը պահպանված է։

Ներածությունում խոսել է աշխատանքի թեմայի մասին, տվել կառուցվածքը։ Հստակ ձևակերպված են խնդիրները, ինչը քիչ աշխատանքներում է հանդիպում։ Աշխատանքի նպատակը ևս նշված է։ Լավ է, որ խնդիրները և նպատակները տրված են առանձին՝ հստակ ձևակերպմամբ։ Անդրադարձել է թեմայի արդիականությանը՝ նշելով, որ ժամանակակից փոփոխվող աշխարհում կրթական համակարգի շարունակական արդիականացումը կարևոր է։ Ներածությունից պարզ է դառնում, որ աշխատանքի հեղինակը լավ պատկերացնում է թեմայի նշանակությունը, կարևորում է կրթության ժամանակակից և փոփոխվող լինելը։ Կարծում եմ՝ ներածության մեջ չափազանց շատ են մեջբերումները. տարբեր փիլիսոփաների, հայտնի մարդկանց մտքերի ընտրանին կրթության վերաբերյալ թեմայի շուրջ է, բայց «Ներածության» մեջ ուղղակի ծավալ է ապահովում։

Գլուխ առաջին՝ Եզրութաբանություն

Այս գլուխը շարադրված է մի շարք իրավական փաստերի հիման վրա և խիստ վարչական ոճի է, ինչը, իհարկե, աշխատանքի դեպքում առավելություն է։ Տրված են «Հեղինակային կրթական ծրագիր», «Պետական այլընտրանքային» եզրույթների և ծրագրերի սահմանումները, մեկնաբանությունները։ Եթե տեքստն ուղղված է բոլորին՝ ծնողին, սովորողին, այլ շահառուների, կարծում եմ՝ ավելի մանրամասն ու պարզ մեկնաբանության կարիք կա։

Գլուխ երկրորդ՝ Կրթության նշանակությունը և դրա հասանելիության մարտահրավերները ժամանակակից աշխարհում և ՀՀ-ում

Այս գլխում հեղինակն անդրադարձել է կրթության հասանելիության մարտահրավերներին՝ բավականին լայն ուսումնասիրություն կատարելով, քանի որ նշել է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի պարագայում: Ուսումնասիրությունը հետաքրքիր էր և ընդգրկուն, սակայն, կարծում եմ, այս աշխատանքի պարագայում մի փոքր շեղվում էր բուն թեմայից և կարող է առանձին ուսումնասիրության թեմա դառնալ: ՀՀ-ում կրթության հասանելիության մարտահրավերների ուսումնասիրությունը հիմնված էր հայտարարությունների և փաստաթղթերի վրա, կարծում եմ՝ այս մասով կարելի էր ավելի գործնական մեթոդ կիրառել՝ հարցում, ուսումնասիրություն, դիտարկում, այլն:

Գլուխ երրորդ՝ Հեղինակային կրթական ծրագիր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում և հետազոտական վարժարանում

Այս գլխում հեղինակը մանրամասն ներկայացրել է հեղինակային կրթական ծրագրի կարևոր բաղադրիչները՝ պատմելով դրանց կիրառման և ընձեռած հնարավորությունների մասին: Ընդգրկված բոլոր ենթավերնագրերը հեղինակային կրթական ծրագրի մեխն են: Կարծում եմ՝ այս գլուխը ամբողջական է և կարող է անհրաժեշտության դեպքում գործածվել նաև լրացուցիչ նյութ այլոց հեղինակային կրթական ծրագրին ծանոթացնելիս:

Հավելվածում առկա նկարները և մեկնաբանությունները լրացուցիչ բովանդակային նյութ են աշխատանքի համար, քանի որ կարծում եմ ավելի պատկերավոր են դարձնում ասելիքը:

Աշխատանքում կան բազմաթիվ հղումներ, տողատակեր, ինչը, կարծում եմ, ավելի վստահելի է դարձնում աշխատանքը:

Հետազոտական աշխատանքի առավելությունները՝

- Աշխատանքը ծավալուն էր, մանրամասն և լայն ուսումնասիրված։
- Նկատելի է, որ հեղինակը տիրապետում է ընտրած թեմային ամբողջովին։
- Աշխատանքի հեղինակը շարադրանքում եղել է ազատ և համաձակ՝ վերլուծելով և ուսումնասիրելով փաստեր, ենթադրություններ անելով։

Տաթև Աբրահամյան

Միջին դպրոցի հայոց լեզվի և գրականության դասավանդող